


ՊՐՈՓ. Ա. Բ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԽՈԼԵՐԱ

ՀԱՅՊԵՏՎԱՏ
1942



Պրաֆ. Ա. Բ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Բնակչութեան զինաբանութեան գովոր

616.932

Ա-29

ԽՈԼԵՐԱ

(ԽՈԼԵՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՎԱՐԱԿԻ
ԱՎՋԱՑՄԱՆԵՐԸ, ՆՐԱ ՏԱՐԱԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ԵՎ ՊԱՅՉԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ)

A 210



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԴՅՈՒՆ ԱՆԴԻՆՈՒԹՅՈՒՆ
1942

Проф. А. Б. АЛЕКСАНЯН
Холера

(На армянском языке)
Армгиз — 1942 — Ереван

ԽՈԼԵՐԱ

1. ԽՈԼԵՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կան այնպիսի հիվանդություններ, որոնք երկար տարիներ է, ինչ անհայտ են մեր երկրին։ Այդպիսի հիվանդությունների թվին է պատկանում նաև խոլերան, որի վերջին 12 դեկտեմբեր մեղ մոտ հայտաբերված է եղել 1925 թ.։ Դրանից հետո մեր երկրում խոլերա չի եղել։

Սակայն չնայելով դրան, յուրաքանչյուրը մեղնից պետք է հիշի, որ ներկայումս, հայրենական մեծ պատերազմի լարված պայմաններում, պատերազմ, ոքը մեր վզին փաթաթեց հիտլերյան Գեր-

մանիան; խոլերան կարող է մռւաք դարձել մեր երկիրը, եթե մեր կողմից ժամանակին ձեռք չառնվեն անհրաժեշտ միջոցներ: Խոլերայի պատմությունը մեղսովորեցնում է, որ պատերազմները սովորաբար նպաստում են խոլերայի տարածմանը աշխարհի շատ մասերում: Անցյալում խոլերան հանդիսանում էր ոչմիւրյն պատերազմների, այլև ուխտագնացության ուղեկիցը: Կրոնական ծեսեր կատարելու համար մարդիկ խոլերայով վարակված վայրերից հասնելով Սրաբիա, իրենց հետ տեղափոխում (տարածում) էին նաև խոլերա հիմքանդությունը: Վերջապես խոլերան առաջ էր շարժմում նմանապես և առեւտրական հանողարհներով, առեւտրական հաբարերությունների միջոցով:

Խոլերայի հայրենիքը (նրա մշտական օջախը) համարվում է Հնդկաստանի Ներքին Բենգալիա կոչված մասը— Գանդես և Բրահմապուտրա գետերի ստորին մասերը:

1817 թվականին խոլերան առաջին
անգամ սկսեց. լայնորեն տարածվել իր
մշտական օջախի սահմաններից դուրս:
Այն ժամանակվանից նա սկսեց ախտահա-
րել Ասիան, Եվրոպան, Աֆրիկան, Ավրո-
պալիան և Ամերիկան, առանձին տեղե-
րում խիստ ուժեղ քոնկումներ տալով:

1817 թվականից մինչև այժմ այդպի-
սի ահավոր և ուժեղ համաճարակներ
(կամ ինչուես նըանց անվանում են պան-
դեմիաներ) նկարագրված են 6 անգամ:

Առաջին պանդեմիան (1817—1823)
ընդգրկեց Չինաստանը, Իրանը (Թալ-
լիզը), Միջազգեաքը և Թյուրքիան (Էրզը-
րումը): Խոլերան առաջին անգամ Իրա-
նից Ռուսաստան անցավ 1823 թ. Անդըր-
կովկասի վրայով (Երևան, Բագու, Թբի-
լիսի), իսկ այսուղից այնուհետև Կաս-
պից ծովով (Ասվերի միջոցով): Աստրա-
խան: Բնորոշ է, որ այդ պանդեմիան,
տեղի ունեցող պատերազմների հետևան-
քով, տարածվում էր ուազմական ճանա-
պարհներով:

Երկրորդ պանդեմիան (1826—1837),
որն սկզբում ընդդրկեց Ավղանիստանն ու
Իրանը, առաջ էր շարժվում Հ ճանապար-
համ: Խոլերան Ավղանիստանից անցավ
Թուրքեստան և Օրենբուրգ, իսկ Իրանից՝
Երևան, Բագու, Թբիլիսի, Վատրախան և
վեր՝ Վոլգայի ուղղությամբ և Ռուսաս-
տանի հարավ-արևմտյան մասը: Այնու-
հետեւ խոլերան տարածվեց Ավստրի-
այում, Անգլիայում և Գրուսիայում: Անդ-
իտայից նա առաջ շարժվեց Պետք Հյու-
սիսային Ամերիկա, իսկ Փրանսիական
դորքերը վարակը տեղափոխեցին Աֆրի-
կա:

Երրորդ պանդեմիան (1846—1862)
ընորոշվում է նրանով, որ խոլերան տա-
րածվելով Գինաստանում, անցավ Իրան
և հետո Եվրոպական երկրները: Այդ շր-
ջանում խոլերա նկատվեց նաև Թյուրքի-
այում, Ռուսաստանի Եվրոպական մա-
սում և Սիբիրում: Ուշագրավ է, որ
1847—1848 թ.թ. Ռուսաստանում խոլե-

բայից հիվանդացավ մոտ 1 միլիոն 800
հազար մարդ, իսկ նրանցից մեռան ավելի
քան 700 հազար մարդ:

Չորրորդ պանդեմիայի ժամանակ (1864—1875) խոլերան Եվրոպայում հանդես եկավ արգեն կարծ ճանապարհով — Սուեզի ջրանցքով 1864 թվականին, այսինքն այդ ջրանցքը փորելուց մի տարի անց: Խոլերան Եգիպտոսից տարածվեց Թյուրքիա, Աֆրիկա, Հարավային Ռուսաստան, Եվրոպա, Ամերիկա: Հետաքըրքը բրական է, որ 1866 թվականին տեղի ունեցող ավստրո-պրուսական պատերազմը մեծապես ազդեց խոլերայի զարդացման ու տարածման վրա:

Ինչ վերաբերում է հինգերորդ պանդեմիային (1883—1896), ապա նաև Եգիպտոսի վրայով անցնելով Երևաց Միջերկրականի ծովագնյա երկրներում ու տարածվեց Ֆրանսիայում, Իսպանիայում, Իտալիայում և Ավստրո-Հունգարիայում: 1889 թվականին Եվրոպայում խոլերա չըկար, վրա հասավ մի կարճատե դադար.

սակայն նույն այդ թվին խոյերան Հնկաստանից անցավ Ավղանիստան, Իրան, Կասպից ծովի ափերը, Բազու և ավելի վեր դեպի Աստրախան. Խոյերան Աստրախանից միաժամանակ դեպի վեր շարժվեց Վոլգո գետի հովտով և հասավ Պետերբուրգ, իոկ Բաքվից—դեպի Կովկաս, որի հետեւ վանքով խոյերան նորից սկսեց մոլեգնել Կենտրոնական Եվրոպայում :

Վերջին, այսինքն վեցերորդ պանդեմիան (1902—1925) տևեց համարյա մեկ քառորդ դար՝ սկզբում Արարիայից և Միջազգետքից երևան գալով Իրանում, խոյերան Սնդրկովկասի վրայով տարածվեց դեպի Ռուսաստան և Արևմտյան Եվրոպա: 1902 թ. Խոյերան Սունդարի գետով (Մանջուրիա) մտավ նաև Հեռավոր Արևելք—Ամուրսկայա և Պրիմորսկայա մարզերը:

1922 թվականից Սովետական Միությունում խոյերան սկսում է ընկնել և սովետական տռողջապահական մարմինների և սովետական հաստրակայնության

շայն մասնակցության շնորհիվ, հաջորդ
տարին ՍՍՌՄ-ում հայտաբերված է ե-
ղել ընդամենը 140 դեպք; իսկ 1924—1925
թվականներին՝ 10 և 12 դեպք:

Համառոտ գծերով սա է խոլերայի հա-
մաճարակի (էպիդեմիայի) պատմությու-
նը վերջին հարյուրամյակի ընթացքում:

Խոլերայի էպիդեմիաներն անցյալում
ավելիչ թշվառություն էին աշխարհի
բոլոր երկրների ժողովուրդների համար։
Միայն շատ քիչ վայրեր, ինչպես ծայրա-
հեղ հարավը, ծայրահեղ հյուսիսը, Խա-
ղաղ օկիանոսի մի քանի կղզիներ աղատ
էին խոլերայից։

103 տարիներից, այսինքն այն մոմեն-
տից, երբ խոլերան առաջին անգամ երե-
վան եկավ Ռուսաստանում, ուրիշ խոսքով
1823 թվականից մինչև էպիդեմիայի վեր-
ջանալու տարին (1925 թ.) եղել է 55 խո-
լերային տարի, այսինքն ավելի քան կես
դար։ Իսկ եթե հաշվի առնենք, որ խոլե-
րայով հիվանդացած յուրաքանչյուր 100
մարդուց, այն տարիներին, մահանում էր

40-ից մինչև 50 մարդ, ապա պարզ կլենի, թե բնակչությունն անցյալում ինչքան էր տուժում այդ հիվանդությունից:

Անհրաժեշտ է հիշել նաև այն, թե խոյերան ինչպես էր զարգանում նախկին Երևանյան նահանգում և ավելի ուշ Հայոստանում՝ դաշնակցական կառավարության տիրապետության օրերին։ Բերենք մի քանի օրինակներ։ 1904 թ. խոյերան ընդհուպ մոտեցավ Արաքս գետի սահմաններին։ Գետի իրանական ափի բնակավայրերն ընդգրկեցին խոյերացի էլիդեմիայի կողմից։ Դրա չնորհիվ Արաքս գետը մշտակես կեղառում էր, այսինքն վարակվում էր խոյերայի միկրոբներով։ Բնական է, որ այն վտակներն ու գետակները, որոնք իրանական կողմից թափվում են Արաքս գետը, անցնելով վտրակված տեղերով, խոյերայի միկրոբներ էին պարունակում իրենց մեջ և դրա հետեւանքով վարակում էին Արաքս գետը։

Այդ ջրերի վարակումն առանձնապես սաստկանում էր իրանի բնակիչների կրո-

նական ծեսերի շնորհիվ (գիտակների լու-
ղացում և այլն)։ Այդ ժամանակ, ինչպես
հայտնի է կառուցվում էր Ռուբենսիու-
Զուլֆա Երկաթզիծը, որտեղ աշխատում
էին մի քանի հազար բանվորներ (տեղա-
ցիք և իրանից)։ Հոկտեմբերին մեծ էպի-
դեմիա սկսվեց այն բանվորների մեջ,
որոնք խմելու համար օդտվում էին Ա-
րաքսի ջրից։ Որովհետև էպիդեմիան կա-
տաղի ճեւ ստացավ, ուստի բանվորները
փախան այս ուայն կողմ և դրանով խոլե-
րան տարածեցին սահմանակից բնակա-
վայրերում։

Երկաթզի բանվորների մեջ կատաղի
համաձարակին նպաստում էին նրանց
կյանքի ծայր աստիճան հակասանիտարա-
կան պայմանները և տեղում պատճաշ
բժշկական օդնության բացակայությունը

Այստեղից խոլերան տարածվեց
Երևանի նահանգի խորքերը։ Բավական է
ասել, որ 1904 թ. նոյեմբերից մինչև
դեկտեմբերի 19-ը խոլերայով հիվանդա-
ցավ 4600 մարդ, որից մեռավ 3665։

Նշանակալից է այն հանգամանքը, որ
Երեան քաղաքի բաղնիքների հակասանիւ-
տարական պայմաններն իրենց հերթին
նազառություն էին խոլերայի հետագա տո-
րածմանը: Խոլերայի միկրոբներ էին
Հայուարերված եղել ոչ միայն բաղնիքնե-
րի ավագաններում (Հառողներում), այլև
Հանվելու տեղերում: Տվյալներ կան,
որոնք վկայում են, որ խոլերայի միկ-
րոբները ձմեռում էին բաղնիքներում:

Բերված օրինակն ապացուցում է, թե
խոլերայի տարածման դործում ինչ խո-
շոր նշանակություն ունեն հակասանիտա-
րական պայմանները, որոնք նազառություն
են էպիդեմիայի ղարդացմանը, թե ինչ-
ողես խոլերան կարող է տարածվել նաև
իր «սեղոնից» զուրա, այսինքն ոչ այն
տմիաներին, երբ նա լայնորեն տարած-
ված է լինում (Հունիս, Հուլիս, օգոստոս
և սեպտեմբեր): Որ խոլերան ավելի
շատ նկատվում է տմուանը և աշ-
նան սկզբին, բացատրվում է մի շարք

Հանգամանքներով. տարվա այդ եղանակին ավելի հաճախ են վարակվում ջրաժառակարաբման աղբյուրները, ճանձերի առատությունը, որոնք հանդիսանում են խոլերայի փոխանցողները, այնուհետև նշանակություն ունի ուտելիքի բնույթը — մրգերի, բանջարեղենի, կանաչեղենի առատությունը, որոնք կեղտությում են ճանձերի և մարդկանց կողմից, ջրի առատ գործածությունը և այլն։ Սակայն խոլերայի բոնկումները հնարավոր են ոչ միայն այդ ամիսներին, այլ և ուշ աշնանը, նույնիսկ ձմռանը։ Այս բանը երբեք չպետք է մոռանալ։

1915 թ. նախկին Երևանի նահանգում արձանագրված են եղել խոլերայով հիվանդներ՝ ընդամենը 426 մարդ։ Կասկածից դուրս է, որ դրանք երբեք էլ խոլերայի բոլոր գեպքերը չեն, որոնք եղել են 1915 թ. նախկին Երևանի նահանգի տերիտորիայում։ Մի քանի տասնյակը բըժիշկներ, որոնք այն ժամանակ սպասարկում էին դյուզական վայրերին ու քա-

զաքներին, հասկանալի է, որ չէին կարող ընդդրկել խոլերայով վարտկված բոլոր հիվանդներին:

Խոլերան սկսվեց 1915 թ. հուլիսի վերջերին, մուտք գործելով իրանական և թյուրքական դռներից: Այդ տարին խոլերան Երևան քաղաքից բացի (165 դեպք) նկատվել էր նաև Երևանի գավառում, Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական) և նրա գավառում, իջմիածնի գավառում և մի քանի ուրիշ տեղերում: Սկզբում ամենից շատ դեպքեր նկատվում էին քաղաքներում:

Հետագայում, 4-ից ավելի տարիների ընթացքում, այսինքն ընդհուպ մինչև 1920 թ. սկիզբը խոլերան շարունակվում էր նկատվել, մեկը մյուսի հետեւից ախտահարելով բնակալայրերը: 1916 թ. խոլերան նկատվել էր նաև Նոր Բայազետում և նրա գավառում, որտեղ նա երեվան էկավառելառերական ճանապարհներով փոլերայով ախտահարվեց և Մեղրու

չրջանը (առավելապես Ազուլիսը), ոչ-
ոպես իրանին սահմանամերձ շրջան:


Սակայն խոլերայի էպիտեմիան ավելի
ուժեղ բռնկվեց 1918թ: Այդ թվի օդոս-
տոսին աքրեն արձանագրված է եղել
1554 հիվանդ (նրանցից մեռել է 794
մարդ), սեպտեմբերին հիվանդացել է
1882 մարդ (մեռել է 1052), իսկ հոկտեմ-
բերին խոլերայով հիվանդ արձանագրր-
ված է եղել 2342 մարդ (նրանցից մահա-
ցության դեպքեր 1207): Ուշադրավ է, որ
խոլերան մի քանի տարի շաբունակում էր
նկատվել միևնույն գտվառներում (նո-
խորդ տարիների օջախներում): Բայց
այդ տարին խոլերան առաջին անգամ
թափանցում է Դիլիջան, իսկ այնտեղից
Դիլիջանկա գետի հովտով իջնում է ցած-
դեալի Քարվանսարայի գավառը (այժմ
իջևան), որտեղ ախտահարում է 14
գյուղ և ավելի շատ Զարխեց, Սև-քար-
վ-Աղդան, Ն-Աղդան, Ռզունթալա, Ռե-
վազլու, Դստլու, Ղոշղոթան, Կոտի-
քենդ, Դովելս և մի քանի ուրիշ գյուղեր:

Նախորդ տարիների նման, այդ տարին ևս ձմեռելով խոլերան 1919 թ. հունվարից սկսեց աստիճանաբար տարածվել մի շարք գյուղեր ու քաղաքներ։ Անձամբ ինձ առիթ է եղել 1919 և 1920 թ.թ. խոլերայի զեպքեր նկատել Դովեխ, Դոշոթան և Կոտիքենով գյուղերում։

Այսպիսով, խոլերան, որն սկզբում ավելի շատ պատահում էր քաղաքային բնակավայրերում, այդ թվում նաև Երևան քաղաքում, հետագայում սկսեց ավելի ուժեղ ախտահարել գյուղական վայրերի բնակչությանը։ Մի շարք տարիների ընթացքում խոլերան նկատվում էր միևնույն տեղերում (Երևանի, Էջմիածնի գավառներում)։ Ժամանակ առ ժամանակ այդ վարակը մտնում էր նաև հեռավոր բնակավայրեր և լեռնային շրջաններ, օրինակ, Ն-Բայազետի գավառը, Բաշգյառնի, Դիլիջան և այլն։ Վարակը տարածվում էր ջրի միջոցով, Էջմիածնի գավառում վատորակ խմելու ջրի միջոցով, արխի սիստեմի մեջոցով։ Դիլիջա-

նից վարակված Դիլիջանկա գետակով խոս-
լերան տարածվում և ախտահարում է
սահմանակից գյուղերը. ցուցումներ կան,
որ այդ հիվանդությունը Երևանում փո-
խանցվել է Մամբի ջրանցքի, Գետառչայի
ջրի միջոցով և այլն: Կարելի է վստահո-
րեն ասել, որ նույնիսկ խոլերայի ակըն-
հայտ հատկանիշներով հիվանդներ բոլո-
րովին չեն հայտաբերվում, չխոսելով
այն մասին, որ հիվանդության թեթև
դեպքերը մնում էին առանց հաշվառման
(թիշկներն սպասարկում էին դիսավո-
րասպես քաղաքներն ու գավառական
հենտրոնները. իսկ գյուղերում հազվա-
դեպ էին ֆեղշերական պունկտերը):

Այն տարիներին խոլերայի տարած-
մանն առանձնապես նպաստում էին ընակ-
չության տնտեսական ծանր պայմաննե-
րը, մարդկանց մասսայական տեղաշար-
ժումները, գաղթականությունը, սովը,
սանիտարական ցածր գրագիտությունը,
ընակավայրերի ծայր աստիճան հակասա-
նիտարական պայմանները:



Այսպես էր ընթանում խոլերան անցյալում, մինչև սովետական իշխանության հաստատումը: Երկրի սովետիզացիայից հետո մեզ մոտ խոլերայի դեպքեր չեն եղել:

2. ԽՈԼԵՐԱՅԻ ՄԻԿՐՈԲՆԵՐԸ

Պատերազմի ժամանակի պայմաններում մենք միշտ պետք է հիշենք, որ ներկայումս այս վտանգավոր ինֆեկցիան կարող է նորից դուրս դալ իր մշտական օջախից և լայնորեն տարածվել շատ երկըներում:

Նախ և առաջ հարկավոր է դիտենալ, թե ինչից է առաջանում խոլերան:

Խոլերան, որպես սուր ընթացող վարակիչ հիվանդություն առաջանում է միկրոբների կողմից, որոնք տեսանելի են միայն մանրադիտակով և նման են մանրագույն ցուպիկների: Այս ցուպիկները կորացած են ստորակետի նման: Խոլերայի միկրոբները կոչվում են վիրոբոններ,

որոնց հայտաբերելէ Ռ. Կոխը 1883 թվականին Եղիպատոսում լոնկված խոլերայի էպիդեմիայի ժամանակ։ Ահա այս վիրաբիոնները հանդիսանում են խոլերայի հարուցիչները։

Խոլերայի վիրաբիոններն օրգանիզմից դուրս սովորաբար վատ են զգում իրենց և մարդկային օրգանիզմից դուրս, ջրում, հողում, սննդամթերքներում և այլ տեղերում նրանք երկար չեն կարողանում մնալ, և վերջի վերջո ոչնչանում են։ 56° ջերմության մեջ խոլերայի վիրաբիոնները ոչնչանում են 20—30 րոպեից Հետո, իսկ 80° ջերմության մեջ 5 րոպեի ընթացքում։ 100° ջերմության պայմաններում նրանք արագ կերպով ոչնչանում են։ Ահա թե ինչու եռացրած ջուրը խոլերայի կենդանի վիրաբիոններ չի պարունակում։ Բնորոշ է, որ սառչելու դեպքում (այսինքն 0°-ից ցածր) վիրաբիոնները չեն ոչնչանում։ Հետաքրքրական է նաև այն, որ մի շաբաթ քիմիական նյութեր շատ կարճ ժամանակում իջոցում են վիրաբին

ոչնչացնում են խոլերայի վիրոհոններին։
Այսպես, օրինակ, եթե վերցնենք 1 մաս
քլոր՝ 1 միլիոն մաս ջրին, ապա այսպիսի
լուծույթի մեջ վիրոհոնները ոչնչացնում են
10—20 ըոպեի ընթացքում։ Սրանով է
բացատրվում խոլերայի ժամանակ խմե-
լու ջուրը դեղինֆեկցիայի ենթարկելու
անհրաժեշտությունը։ Նույն բանով է
բացատրվում նաև զուգարանները, կեղ-
տաջրի հորերը, աղբի արկղները և այլ
կեղտոտված տեղեր քլորակրի լուծույ-
թով դեղինֆեկցիայի ենթարկելու ան-
հրաժեշտությունը։ այլպիսի դեսղե-
րում սովորաբար բավական է լինում գոր-
ծադրել քլորակրի 10—20 % լուծույթ
(այսինքն 1 գույլ ջրին 1 կամ 2 կիլո քլո-
րակրի)։ Զհանգցրած կիրը (այսինքն այն
կիրը, որն ստացվում է կիրը հատուկ վա-
ռարաններում այրելու միջոցով և գոր-
ծադրվում է շինարարության համար) 20 % լուծույթի ձևով խոլերայի վիրոհոն-
ներին ոչնչացնում է 1 ժամից հետո։ Խո-
լերայի վիրոհոնները նմանապես անկա-

յում են Նթենըանց վրա ազդենք սուլեմայի
լուծույթներով. 1 մաս սուլեման 2 կամ 3
միլիոն մաս ջրի հետ, շատ կարճ ժամա-
նակամիջոցում. (5—10 րոպեում) սպա-
նում է խոլերայի վիրուսներին: Նույն-
պիսի կարճ ժամանակամիջոցում նրանք
ոչնչանում են կարբոլաթթվի $\frac{1}{2}$ —1⁰/0
լուծույթից: Խոլերայի վիրուսներն այն
աստիճան զգայուն են դեպի ամեն տեսակ
թթուները, որ մի քանի վայրկյանում
ոչնչանում են աղաթթվի կամ ծծմբա-
թթվի շատ թույլ լուծույթից (1 մաս
թթու 10 հազար մաս ջրին): Վերջապես,
խոլերայի վիրուսները հեշտությամբ
ոչնչանում են չոր պայմաններում. նրանք
չեն դիմանում չորացման, իսկ խոնավ
պայմաններում կարող են կենդանի մնալ:

3. ԽՈԼԵՐԱՆ ԻՆՉՊԵՍ Է ՄՏՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԴԱ- ՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆԻԶՄՈՒՄ

Խոլերան ունի մի շարք հատկանիշ-
ներ, որոնք շատ բնորոշ են այդ հիվան-

դության համար։ Եթե ոյլը հատկանիշ-
ները լրիվ ու պարզ են արտահայտված
լինում, ապա նրանց հիման վրա դժվար
չէ ճանաչել հիվանդությունը։

Սակայն միշտ էլ հնաբավոր չի լինում
ճանաչել այդ հիվանդությունը, որովհե-
տեւ խոլերայի էպիդեմիայի ժամանակ
հաճախ առիթ է լինում նկատել, թե ինչ-
պես հիվանդության ծանր պատկերի հետ
միասին պատահում են ոչ թե լրիվ ար-
տահայտված հատկանիշներով թեթև
դեպքեր։ Ուստի ուշադրության արժանի
են ոչ միայն հիվանդության այն դեպքե-
րը, որոնց ժամանակ՝ հիվանդությունը
պարզ ու լրիվ է արտահայտված լինում,
այլ և հավասարապես այն դեպքերը,
որոնք թեթև են ընթանում և ինչպես տ-
սում են, իրենց ընթացքով քիչ են նը-
մանվում այդ ծանր վարակիչ հիվանդու-
թյանը։ Խոլերայի թեթև դեպքերի ժա-
մանակին հայտարերելը կարեւոր է ոչ մի-
այն նրա համար, որ այդպիսի հիվանդ-
ներին հարկավոր է բուժել, բուժական

օգնություն ցույց տար, այլ և այն
պատճառով, որ նման գեղքերը կարող
են խոլերայի տարածման պատճառ
դառնալ ընտանիքի մնացած անդամների
մեջ, տվյալ տանը, նույնիսկ ամբողջ ըլ-
նակավայրում:

Խոլերայի սովորական ձեր հետեւյալ
կերպ է աբտահայտվում: Ենթադրենք,
թե մարդ որևէ տեղ վարակվեց՝ այսին-
քըն այդ վարակիչ հիվանդության միկ-
րոբները մտան նրա օրդանիզմը: Այդ
միկրոբները կարող են մեր օրդանիզմի
մեջ մտնել բերանից՝ ընդունած ջրի,
ուտելիքի միջոցով, կամ երբ խոլերայի
միկրոբներով վարակված մատներով
մենք ձեռք ենք տալիս մեր շրթունքնե-
րին, բերանին: Այս կամ այն ճանապար-
հով մտնելով օրդանիզմի մեջ, խոլերա-
յի միկրոբներն այնուհետև կերակրա-
փողի միջով անցնում են ստամոքսը,
իսկ վերջինից՝ աղիները: Ստամոքսում,
որտեղ ինչպես հայտնի է, թթու միջա-
վայր կա, խոլերայի միկրոբները կարող

Են ոչնչանալ։ Բայց պետք է, հիշել, որ
խոլերայի հարուցիչները կարող են հեշ-
տությամբ անցնել ստամոքսի միջով ու
կենդանի թափանցել աղիները, որտեղ
արդեն նրանց կյանքի համար կան հար-
կավոր նպաստավոր պայմանները։

Խոլերայի միկրոբները ստամոքսի
միջով անցնել կարող են մանավանդ այն
գեղքերում, երբ մենք շատ ջուր ենք
խմում, երբ այդ միկրոբները դժուվում
են ուտելիքի կտորների մեջ (մսի, հա-
ցի կամ ուրիշ մթերքների կտորի մեջ,
որը պաշտպանված է ստամոքսի թթվի-
վնասակար աղղեցությունից), երբ վա-
րակված սնունդը մենք ընդունում ենք
անոթի և այլն։ Այսպես թե այնպես,
երբ միկրոբներն արդեն մտնում են
աղիների մեջ, նրանք այնտեղ նպաստա-
վոր պայմաններ են դժունում իրենց կյան-
քի համար և սկսում են զարգանալ ու
բազմանալ։ Սակայն աղիներում, որտեղ
խոլերայի հարուցիչներն սկսում են բազ-
մանալ, տեղի է ունենում նաև նրանց կոր-

ծանումը, այսինքն, բազմացման հետ մի-
ասին կատարվում է նրանց ոչնչացումը:
Այդ սատկած միկրոբների թույները,
նրանց քայլքայման հետևանքով ներ-
ծծվում են օրգանիզմի մեջ և դրանով
առաջացնում հիվանդության այս կամ
այն հատկանիշը: Նշանակում է, այն
մարդը, որի օրգանիզմի մեջ մտել է
միկրոբը և այնուեղ սկսել է բազմանալ,
սկզբնական շրջանում իրեն հիվանդ չի
դգում, նա գտնվում է ինչպես ասում
են, հիվանդության դադանի շրջանում:
Հիվանդության դադանի շրջանի ժամկե-
տը, այլ կերպ ասած, միկրոբը օրգա-
նիզմի մեջ մտնելու մոմենտից մինչև
հիվանդության հատկանիշների երևան
դաւ, տարբեր է լինում. այդ ժամկետը
կարող է հավասար լինել մի քանի ժա-
մի, բայց կարող է տեսլ մինչև 5 օր,
սովորաբար նա տեսում է 2—3 օր:

Դադանի շրջանն անցնելուց հետո
տվյալ մարդու մոտ կարող է հիվանդու-
թյունն սկսվել կամ բոլորովին չլինել:

Այն դեպքերում, երբ օրդանիզմը պաշառ
պանվում է և հաղթահարում խոլերայի
միկրոբներին, հիվանդությունը չի ըստ
կոլում. նշանակում է այդպիսի մարդը
հաղթեց վարակին: Բայց այն դեպքե-
րում, երբ օրդանիզմի պաշտպանական
միջոցները անբավարար են լինում,
մարդը հիվանդանում է խոլերայով:

Որո՞նք են հիվանդության դլխավոր
հատկանիշները:

4. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Սովորաբար հիվանդությունն ըս-
կավում է որովայնի շրջանում զգացվող
ցավերով ու ծակոցներով, իսկ դրանից
հետո երեան են գալիս լուծեր: Մինչեւ
այդ հիվանդը կորցնում է ախորժակը,
թուլություն է զդում: Հիվանդությու-
նը կարող է սահմանափակվել ուղղակի
խոլերային լուծով ու դրանով վերջու-
նալ: Բայց, սովորաբար, շուտով (մի
քանի ժամից) կամ երեմն օրերից հետո)

Հիվանդությունը սաստկանում է — լու-
ծերը հաճախակի են դառնում (ժամում
2—3 անգամ), կղանքը դառնում է քա-
ցարձակապես ջրիկ, լուծերին ավելա-
նում է տանջալի փսխոցը։ Փսխոցի
երեան գալու հետ խիստ վատանում է
Հիվանդի ինքնազգացությունը։ Սկզբում
փսխվածքային զանգվածները չափա-
զանց առատ են լինում։ Փսխոցի սաստ-
կացման հետ, դռւբս շպրտվող փսխված-
քային զանգվածները քանի զնում ավելի
ու ավելի ջրիկ, են դառնում։ Ինչպես Հի-
վանդի կղանքը, այնպես էլ նրա փրսխ-
վածքային զանգվածներն ստանում են
բրնձի եփուկի տեսք։ Հիվանդն սկսում է
ավելի ու ավելի շատ հեղուկ կորցնել
օրդանիզմից։ Օրդանիզմի մեջ խոլերայի
միկրոբների թույների ներծծման հե-
տևանքով նկատվում են օրդանիզմի
ընդհանուր թունավորման երեսույթներ։
Մի խոսքով, այդպիսի դեպքերում զար-
դանում է, ինչպես տում են, խոլերի-
նայի պատկերը։

Բացի հասարակ խոլերային լուծից
և խոլերինայից, այս հիվանդության
համար ավելի բնորոշ է ալգիդային կոչ-
ված ձեռ:

Խոլերայի ալգիդային ձեռի ժամա-
նակ հիվանդի վիճակը սաստիկ վատա-
նում է. ջերմաստիճանը խիստ ընկնում
է (կարող է ընկնել մինչև 35° , նույնիսկ
մինչև 34°), հիվանդն սկսում է ուժեղ
քրտնել (խոլերային քրտինք), մաշկը
սառչում է: Ճիշտ է, այս ձեռի ժամանակ
լուծերն ու փսխոցը կարող են այնքան
հաճախակի ըլինել, ոչ այնպես, ինչպես
մինչ այդ, բայց միանում է մի նոր
հատկանիշ—զկոտոց, որը խիստ անհան-
դըստացնում է հիվանդին: Սրտի գործու-
նեությունն այդ ժամանակ սաստիկ ընկ-
նում է, հանդես է դալիս հեոց, կապ-
տություն, որի հետևանքով ձեռքի թա-
թերը, քիթը, ականջները գրեթե ու-
գույն են ստանում: Այս բոլորին այե-
րանում են նաև ջղաճդումները: Հի-
վանդը ջրի պահանջ է զգում, խիստ նի-

հաբում է. թեև հիվանդի դիտակցությունը սովորաբար պահպանված է լինում, սակայն նա կենդանի դիակի տըպավորություն է թողնում. աչքերը կիսաբաց են, այտերը ներս ընկած, դիմագծերը սրված, ձայնը թուլանում է և խոպոտանում։ Այսպիսի դեպքերում մահը կարող է վրա հասնել 2—5 օրից, իսկ երբեմն էլ մի քանի ժամից հետո։ Խոլերայի այս ձևի ժամանակ մահացությունը սովորաբար հասնում է 90 %-ի։ Իսկ այն դեպքերում, երբ հիվանդությունն առողջացումով է վերջանում, հվանդն սկսում է դարմանալի կերպով արագ կազդուրվել։

Շատ անդամ առողջացող հիվանդի մոտ սկսվում է հերթական մի ուրիշ ձև, որը կոչվում է խոլերայի տիֆոիդ, այսինքն միանում են այնպիսի երեսույթներ, որոնք հիշեցնում են տիֆի պատկերը. Չերմատիճանը բարձրանում է, հիվանդի դեմքը կարմրում է, երեան է գալիս գլխացավ, դառանցանք, երբեմն

անգիտուակից վիճուկ... Այս ձեւի գեպքում
նորից կարող են նկատվել թե փսխոց և
թե ջղաձղումներ։ Տիֆոիդային ձեւը
կարող է տեսել 1-ից մինչև 4 շաբաթ։
Ինչպես ցույց են տալիս դիտողություն-
ները, խոլեռայի այս ձեւը բարձր մահա-
ցություն է տալիս։

Վերջապես, այս բոլորից բացի,
կարող է պատահել և չոր խոլեռա, որի
ժամանակ փսխոցն ու լուծերը բացակա-
յում են և հիվանդությունը շատ ծանր
է ընթանում։ սրտի գործունեությունը
խիստ ընկնում է; Հիվանդը սովորաբար
մահանում է հիվանդության հենց առա-
ջին ժամերին (3—8 ժամվա ընթաց-
քում), որի պատճառով էլ խոլեռայի
այս ձեւը կոչվում է կայծակընթաց։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ
խոլեռայի թեթև դեպքերի կողքին պա-
տահում են այս հիվանդության շատ
ծանր դեպքեր, որոնք սովորաբար մա-
հացու ելք են ունենում։

Խոլեռայի դեմ մղվող պայքարի

զործում սակավ կարեոր նշանակություն
չունի հիվանդների բուժումը։ Բավական
է ասել, որ շատ ծանր վիճակում գըտ-
նըգած հիվանդը, եռանդուն բուժումից
հետո սկսում է շատ արագ կերպով
կազդուրվել և ճիշտ ու կանոնավոր
տարված բուժման հետևանքով մահա-
ցությունն այնպես բարձր չի լինում։
Ինքնին հասկանալի է, որ այդպի-
սի բուժումը հնարավոր է միմիայն
հիվանդանոցային պայմաններում, խո-
լերային բարաքներում, որտեղ հիվանդ-
ներին ցույց է տրվում անհրաժեշտ բը-
ժըշկական օգնություն և այդպիսի դեպ-
քերում պահանջվող խնամք որակյալ
բժշկական աշխատողների կողմէնց։ Կա-
րեսը է հիշել, որ հիվանդանոցում գըտ-
նըգած հիվանդը չի կարող վարակի աղ-
բյուր դառնալ բնակչության համար։

Հիվանդանոցային պայմաններում
բուժվելն անհրաժեշտ է ոչ միայն հի-
վանդության ծանր ձևով ընթանալու-
դեպքերում, այլ և մնացած բոլոր

Նույնիսկ շատ թեթև արտահայտված գեղքերում, որովհետեւ խոլերայի լուծերի ամեն մի թեթև տիպ կարող է ամենակարծ ժամանակամիջոցում, մեզ համար աննկատելի կերպով վերածվել հիվանդության ծանր ձեւի:

5. ԽՈԼԵՐԱՅԻՆ ՆՄԱՆՎՈՂ ՀԵՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով մենք տեսնում ենք, որ խոլերայի հարուցիչները, այդ մանրագույն կենդանի վիրբիոնները մարդու օրդանիզմում առաջացնում են մի շարք փոփոխություններ, որոնք հիվանդացածների մեծ տռկոսին մահվան են հասցնում: Սակայն չպետք է մոռանեալ, որ խոլերային նմանվող լինում են և ուրիշ հիվանդություններ, որոնք նման հատկանիշներ ունեն. օրինակ, զանազան քիմիական նյութերը (մկնդեղ, սուլեմա և այլն), թունավորումները զանազան տեսակի թույներով, որոնք պատահում են

սունկերի, ձկան, մսի մեջ, այնուհետեւ
մալարիայի մի քանի հատուկ ձևերը կա-
ռող են տալ խոլերանման հիվանդություն-
ներ, այսինքն լուծ, փախոց, ջղաճղում-
ներ, ընդհանուր սաստիկ թուլություն,
սրտի դործունեության խիստ անկում և
այլն։ Պարզ է, որ այսպիսի դեպքերում
դժվար է տարբերել թե մենք դործ ունենք
խոլերայի՞, թե՞ խոլերանման հիվանդու-
թյան հետ։ Ահա թե ինչու միանդամայն
անհրաժեշտ է ընդհանուր բժշկական
քննությունից բացի, բակտերիոլոգիա-
կան հետազոտություն կատարել, այլ
կերպ ասած խոլերայի միկրոբներ դանել
հիվանդացածների մոտ։

Եթե հիվանդի մոտ, ընդունենք,
խոլերան շատ թեթև է ընթանում (ինչ-
պես ասում են, հիվանդը ոտքի վրա է
տանում խոլերան), բայց բակտերի-
ոլոգիական հետազոտությունից հետո
նրա մոտ խոլերայի միկրոբներ են գըտ-
նրված, առաջ այդպիսի դեպքերն ան-
որոշական վերաբերում են խոլերային, և

ընդհակառակը, երբ պատահում են խոռ
լերային նմանվող հիվանդության ծանր
ձևեր, որոնք իրենց հատկանիշներով շատ
նման են խոլերային, բայց առաջանում
են ոչ խոլերային միկրոբներից, այդպի-
սի գեղքերը մենք չենք կարող խոլերա-
յին վերագրել և խոլերայի էպիդեմի-
աներ տալ նրանք չեն կարող: Բերված
օրինակները վկայում են այն մասին, որ
բոլոր կասկածելի գեղքերում անհրա-
ժեշտ է ժամանակին (որքան հնարավոր
է շուտ) բակտերիոլոգիական հետազո-
տության ենթարկել հիվանդի կղանքի և
փրխիվածքի զանգվածները, խոլերայի
հարուցիչների առկայությունը հայտա-
բերելու համար: Այդ բանն արվում է
հիվանդի շահերի տեսակետից, նրան
ժամանակին օգնություն ցույց տալու
նպատակով. իսկ խոլերային միկրոբները
ժամանակին հայտաբերելը հնարավոր է
այն ժամանակ, երբ հիվանդը կամ նրան
չրջապատողներն առանց հստագելու,

առանց ուշացնելու օգնության համար
բժշկի են դիմում:

Բակտերիոլոգիական հետազոտու-
թյունը կարևոր է ոչ միայն նրա հա-
մար, որպեսզի ապացուցենք թե տվյալ
հիվանդի օրդանիղմում խոլերայի միկ-
րոբ կա, այսինքն նա հիվանդ է խոլե-
րայով, այլ կարեոր է նաև այն մարդ-
կանց համար, որոնք իրենց օրդանիղ-
մում խոլերայի հարուցիչներ են կրում
և խոլերայով կարող են վարակել իրենց
շրջապատի մարդկանց (ընտանիքի ան-
դամներին, արտադրության մեջ աշխա-
տանքի ընկերներին և այլ տեղերում):
Այդ մարդիկ, որպես վարակ կրողներ,
խոլերայի միկրոբներն իրենց օրդանիղ-
մում կրում են մեծ մասամբ մեկ ամսվա-
րթացքում, բայց առանձին դեպքերում
այդ կարող է տեսել ամիսներ, նույնիսկ
մինչև 1 տարի: Կասկածից դուրս է, որ
նրանց ժամանակին հայտաբերումը խո-
շոր կարեորություն ունեցող գործ է և

տվյալ անձնավորության և թե այն կո-
լեկտիվի համար, որի հետ շփում է
նու:

6. ԽՈԼԵՐԱՅԻ ՑԱՐԱԾՄԱՆ ԱՂԹՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

Առանձնապես մեծ հետաքրքրու-
թյուն է ներկայացնում այն հարցը, թե
ինչպես է տարածվում խոլերան, վարա-
կը ինչ ձևով է փոխանցվում մարդկանց:
Դժվար չէ հասկանալ, որ խոլերան կա-
րող է զարգանալ ու տարածվել միայն
այն դեպքում, եթե խոլերայով հի-
վանդ, կամ իրենց օրդանիզմում խոլե-
րայի հարուցիչներ կրող մարդիկ կան:
Խոլերայով հիվանդը և խոլերայի միկ-
րոբներ կրող ու արտադրող մարդը
հանդիսանում է խոլերայի վարակի մի-
ակ աղբյուրը: Այս վարակիչ հիվանդու-
թյան ուրիշ աղբյուրներ գոյություն
չունեն: Այդպիսի մարդկանց օրդանիզ-
մից խոլերայի միկրոբներն անցնում են
կղանքի, ինչպես նաև փոխվածքային

զանդվածների հետ։ Եթե Հաշվի առնենք, որ խոլերայի միկրոբներն ունեն իրենց մնալու որոշակի տեղը, այսինքն մարդու աղիները, ապա պարզ կլինի, թե ինչու խոլերայով հիվանդների և այդվարակը կըողների կղանքի զանդվածները համարյա միշտ էլ խոլերայի միկրոբներ են պարունակում իրենց մեջ։ Արտադրվելով օրգանիզմից, այդ միկրոբները զանազան ճանապարհներով տարածվում են շրջապատի միջավայրում— ջրի միջոցով, սննդամթերքների միջոցով, ճանճերի և անմիջականորեն հիվանդի, նրա սպիտակեղենի հետ շրփվելու և այլ միջոցներով։

Մարդու կղանքի մեջ խոլերայի միկրոբները կարող են կենսունակ մնալ 2—3 օր։ Նրանք կարող են իրենց կենսունակությունը պահպանել նաև կեղասոված սպիտակեղենի վրա, ջրում, կաթի, պանրի, յուղի մեջ, բանջարեղենի, հատապտուղների և մրգերի վրա հողում և այլն։ Խոլերայի միկրոբը բավականին

Երկար ժամանակ կենդանի կարող է մնալ
խոլերայից մահոցած մարդու զիակում:

Ստորև բերված աղյուսակից պարզ
երևում է, թե խոլերայի միկրոբը որ-
տեղ և որքան ժամանակով կարող է
ապրել:

Խօներայի միկրոբի կենսունակությունն առանձին միջավայ-
րում

Կզանքում	2—3 *
Կեղտուա սպիտակեղենի վրա	12 օր
Խոլերայից ժահացածների դիտկներում	20—30 օր
Հողում (խոր շերտառում)	1-ից մինչև 2 ամիս
Բաց ջրամբարների ջրում	մինչև 2—3 ամիս
Բանջարեղենի, հատապտուղ. և մրգերի վրա մինչև 12 օր	
Աւ հացի վրա	մինչև 4 օր
Սպիտակ հացի վրա	մինչև 25 օր
Կաթի մեջ	մինչև 6 օր
Պանրի մեջ	մինչև 8 օր
Ցուղի մեջ	մինչև 1 ամիս

Եթե կեղտուա սպիտակեղենը մուժի
և խոնավ տեղ է պահվում, ապա խոլե-
րայի միկրոբները կարող են կենդանի

մնալ ամելի քան 12 օր։ Ուշադրավ է
նաև այն հանգամանքը, որ խոլերայի
միկրոբները սառույցի մեջ չեն ոչնչա-
նում և կարող են ձմեռել։

Այնուհետև հարկավոր է հիշել, որ
թթու սննդամթերքները (որոնք, ինչպես
ասում են թթու ռեակցիա ունեն) կոր-
ծանիչ կերպով են ազդում խոլերայի
հարուցիչների վրա, համենայն դեպս
այդ կենսամթերքների մեջ խոլերայի միկ-
րոբները չեն կարողանում սլահպանել ի-
րենց կենսունակությունը։ Հասկանալի է,
որ ծանոթ լինելով խոլերայի միկրոբների
կյանքի պայմաններին շրջապատի մի-
ջավայրում, մենք կարող ենք, դրա հի-
ման վրա սլաշտպանել մեզ վարակու-
մից։

7. ԽՈԼԵՐԱՅԻ ԻՆՉՊԻՍԻ ԷՊԻԴԻԵՄԻԱՆԵՐ ԵՎ ԼԻՆՈՒՄ

Նայած վարակի տարածման ճանա-
պարհներին, խոլերան ընդունում է

այս կամ այն էպիդեմիկ բնույթը։ Վարսկումը կարող է տեղի ունենալ ջրի, ուտելիքի, ինչպես նաև հիվանդների (նրանց կղանքի)։ Հետ անմիջականորեն շփվելու միջոցով։

Այդ բանն ապացուցելու համար սերենք առանձին օրինակներ։ 1892 թվականին Համբուրգում (Գերմանիա) տեղի ունեցավ խոլերայի էպիդեմիա։ Համբուրգի կողքին գտնվում էր Այլտոն քաղաքը և այնքան՝ մոտիկ, որ դժվար էր նրանց պատկերացնել որպես 2 առանձին բնակավայր։ Սակայն խոլերան էպիդեմիկ բռնկում տվեց Համբուրգում, որտեղ խոլերայով հիվանդացածների թիվը մեկ օրում երբեմն հասնում էր 1000 և ավելի մարդու, Այլտոն քաղաքում էպիդեմիայի ամենաբուռն շրջանում խոլերայով հիվանդանալու 30 դեպքից ավելի չեղավ։ Այդ երեսույթի պատճառը բացատրվում է նրանով, որ Համբուրգ քաղաքը խմելու ջուրն ստանում էր ելքադետի կեղառու ջրից առանց մաքրելու

(առանց Փիլտրացիայի ենթարկելու),
իսկ Այլտոն քաղաքը խմելու համար օգ-
տվում էր նույն գետի ջրից միայն մաք-
րելոց հետո (Փիլտրացիայից հետո):
Բացի ջուրը մաքրելուց, հարկավոր է
հաշվի առնել և այն, որ Համբուրգը
կլրա գետից ջուրը վերցնում էր հենց
քաղաքի մոտ, այսինքն այնտեղից, որ-
տեղ ջուրը խիստ կեղտոտվում էր
անֆաքրություններով— մարդկանց կը-
զանքի զանգվածներով, իսկ Այլտոն քա-
ղաքը խմելու ջուրն ստանում էր նույն
այդ գետից, միայն քաղաքից մի քիչ
վեր, այլ կերպ ասած, ջուրը չէր վա-
րակվում խոլերայի միկրոբներով: Վա-
րակված ջրից օդավելու հետևանքով
Համբուրգում մոխնեց այդ հիվանդու-
թյունը— առաջ եկավ սոսկալի համա-
ժարակ-էպիգեմիա, իսկ Այլտոնում նը-
կատվում էին խոլերայով հիվանդանա-
լու եղակի դեղքեր միայն, այն էլ ոչ
թե ջրից, այլ հիվանդների և վարակ
պարունակող նրանց արտաթորություն-

ների (կղանքի) հետ անմիջականորեն
շփովելու միջոցով:

Խոլերայի էպիդեմիաները ջրի մի-
ջոցով այդպես արագ զարդանում էին
նաև ուրիշ չատ երկրներում: Ի գեալ,
1900 թվականին Թավրիզում բւնկվեց
խոլերայի ուժեղ էպիդեմիա, որից մա-
հացավ բնակչության մոտ 20 %-ը:

Ինքնին հասկանալի է, որ ջուրը,
որը խոլերայի մեծ էպիդեմիաներ էր
տալիս Համբուրգում և ուրիշ տեղե-
րում, վարակված էր լինում խոլերայի
միկրոբներով, որոնք բաց ջրամբարնե-
րի մեջ էին ընկնում խոլերայով հի-
վանդներից (անմաքրություններ, կը-
ղանք, լվացք և այլն): Այստեղից պարզ
պետք է լինի, որ այս կամ այն կետը
վտանգավոր է դառնում հիվանդների
խոլերային միկրոբներով վարակվելուց
հետո, որ կետը վարակի սկզբնաղբյուրը
չէ, այլ վարակի իսկական աղբյուրը, այ-
սինքն խոլերայով հիվանդը կամ վարակ
կրող մարդը վարակում են ջուրը, որից

Հետո միայն ջուրը խոլերայի տարածման
աղբյուր է դառնում։ Ահա թե ինչու չա-
փաղանց կարևոր է խնամքով ողահպո-
նել այն դետերն ու մյուս ջրամասա-
կարարման աղբյուրները, որտեղից
մարդիկ ջուր են վերցնում խմելու հա-
մար։

Բացի ջրից խոլերայի վարակը կարող
է տարածվել նաև այն սննդում թերքների
միջոցով, որոնք այս տեսակետից կարևոր
նշանակություն ունեն։ Այստեղ խոշոր
գեր են խաղում հում բանջարեղենը,
մրգերը, կանաչեղենը, կաթը, յուրիը,
սլանիրը, հացը, ղանազան սառն կերակ-
րատեսակները, դոնդողը, սառը խոտը, և
այլն։ Վարակը ո՞րտեղից է անցնում
սննդամթերքների վրա։ Եթե ջուրը վա-
րակված է լինում խոլերայի միկրոբնե-
րով և այդպիսի ջրով լվանում են մը-
թերքները, ապա ջրի մեջ դժոնված միկ-
րոբներն անցնում են սննդամթերքների
վրա և վարակում նրանց։ Սննդամթերք-
ները կարող են վարակվել նաև ճանձերի

կողմից։ Առլեբայի ժամանակ ճանձերը
խոշոր դեր են խաղում։ Հայտնի է, որ
ճանձերը խոլեբայի էպիզեմիայի ժա-
մանակ իրենց մարմնի վրա (թաթիկնե-
րի, թևերի, մազիկների վրա) մեծ քա-
նակությամբ խոլեբայի միկրոբներ են
սկարունակում, նրանք կարող են միկ-
րագներ ունենալ, ոչ միայն իրենց
մարմնի վրա, այլ և մարմնի ներսում,
աղիներում։

Եթե հիշենք, որ ճանձերն իրենց
գոյությունը պահպանելու համար ձու-
են դնում դոմաղբի մեջ, զուգարաննե-
րում, աղբի արկղներում (նրանք այդ
տեղերումն են բաղմանում), ապա դըժ-
վար չի լինի հասկանալ, որ նրանքնստե-
լով խոլեբայի միկրոբներով վարակված
տեղերում, այսինքն մարդու կղաքի վրա,
մարդու սննդի վարակված մնացորդնե-
րի վրա, աղբի արկղներում և այլն,
նստելով սննդամթերքների վրա փո-
խանցում են վարակը։ Սննդամթերքնե-
րը այս ձևով շատ հեշտությամբ են վա-

բակվում։ Իսկ եթե սննդամթերքները
պաշտպանված են լինում ճանձերից
(օրինակ, ծածկված մառայով, պահ-
վում են ծածկված ամանում), ոլարդ է,
որ ճանձերն ի վիճակի չեն վարակելու
նրանց։

Վերջապես բացի ջրից և սննդա-
մթերքներից, խոլերայով կարելի է հի-
վանդանալ ոչ միայն խոլերայով ծանր
հիվանդների (նրանց կղանքի, փրո-
խրվածքային դանդվածների, կեղտուտ
սպիտակեղենի) հետ քանի իջականորեն
շփմբելուց, այլ և այնպիսի մարդկանց
հետ շփում ունենալուց, որոնք կարող
են վարակը հեշտ, ոտքի վրա տանել-
այդպիսի հիվանդները, որպես թեթև
գեղքեր, սովորաբար սակավ նկատելի
են, բայց դժբախտաբար, շրջապատող-
ների համար նրանք շատ ու շատ վտան-
գավոր են։ Վտանգավոր են այդ տեսա-
կետից նաև այն մարդիկ, որոնք իրենց
օրդանիզմում խոլերայի հարուցիչներ
են կրում և կղանքային դանդվածների

Հետ միկրոբներ արտադրելով վարակում են շրջապատողներին:

8. ԽՈԼԵԲԱՅԻ ԿԱՆԽՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ
ՆՐԱ ԴԵՄ

Այս բոլոր ասածներից հետեւում է, որ ժամանակին հայտաբերված և մեկուսացրած խոլեբայով հիվանդը չէ վարակի ջուրը, սննդամթերքները, չըրջապատող մարդկանց: Եվ ընդհակառակը, խոլեբայով հիվանդ մարդը մնալով մեզ հետ առանց մեկուսացման կարող է վարակել և ջուրը, և սննդամթերքները, և իրեն մերձավորներին ու իրեն հետ շփում ունեցող մարդկանց:

Որպեսզի յուրաքանչյուրը մեղնից կարողանա խոլեբայով հիվանդանալուց անձնապես պաշտպանվելու միջոցներ ձեռք առնել, որպեսզի յուրաքանչյուրը մեղնից կարողանա մասնակցել խոլեբայի դեմ մղվող պայքարի դործին, նա պետք է հիշի, որ առողջ մարդը խոլե-

բայով կարող է վարակվել միայն այն
զեպօւմ, եթե խոլերայի միկրոբները
նրա օրդանիզմի մեջ են մտնում քերա-
նի միջոցով։ Խոլերայի միկրոբներով
կեղտոտված սննդամթերքները, կեղ-
տոտված ջուրը, մարդու կեղտոտ ձեռ-
ները— սրանք այն հիմնական ուղիներն
են, որոնցով զարգանում և ծավալվում
է խոլերայի էպիդեմիան։

Սովետական իշխանությունը ձեռք
է առել և այժմ ձեռք է առնում բոլոր
միջոցները, որպեսզի մեր երկրում խո-
լերա հիվանդությունը չլինի։ Բայց
առանց մեր հասարակայնության լայն
մասնակցության խոլերայի դեմ նախա-
զգուշական միջոցառումներ անցկացնելը
դժվար է։ Այս տեսակետից շատ կարեոր
է որպեսզի յուրաքանչյուրը մեզնից կա-
տարի հետեւյալը.

1. Պահպանել ջրամատակարարման
ազգյուրները և թույլ չտալ որ նրանք
կեղտոտվեն։ այսպես, ըլացք չանել և

ուրիշներին թույլ չտար, այդ բանն անելու այն ջրամբարներում, որի ջրից բընակչությունն օգտվում է խմելու համար, այդպիսի ջրի մեջ չդժել աղբ, գոմաղբ, սննդի մնացորդներ, մարդու կրծանք և այլն։ Հարկավոր է հիշել, որ ամեն մի մաքուր ջուր հեշտությամբ կարելի է կեղտոտել՝ ու վարակել այս ձեռք։

2. Միջոցներ ձեռք առնել (օգնել) որպեսզի բոլոր տեսակի թափոնները, սրոնք հավաքվում են աղբի արկղներում, աղբահորերում և այլն, ժամանակին հեռացվեն։ Այն դեպքերում, եթե հարկավոր է դեղինֆեկցիայի ենթարկել զուտարանները, աղբի արկղները, գոմաղբը և ուրիշ թափոնները, ամեն կերպ պետք է օգնել այդ դործին, որովհետեւ դեղինֆեկցիայի միջոցով մենք ոչնչացնում ենք ոչ միայն խոլերայի միկրոբներին, այլ և ճանճերի ձվերին ու թրթուրները. իսկ մենք գիտենք, որ ճանճերը խոլերա փոխանցողներ են։

Այս տեսակետից շատ էարեւը է նաև
հնարավոր մասնակցություն ունենալ
մանմերի ոչնչացման դործում այն մի-
ջոցներով, որպիսիք առաջարկում են
բժիշկները:

Յ. Պահպանել սանիտարական պա-
հանջները սննդի արդյունաքերության
ձեռնարկություններում, խանութինե-
րում, սննդամթերքներ պահելու տեղե-
րում, ինչպես նաև ուշադրություն
դարձնել սննդամթերքները մի տեղից
մի ուրիշ տեղ տեղափոխելու պայմաննե-
րի վրա: Այստեղ ամենազլաւավորն է հի-
շել, որ անլվա ձեռներով չի կարելի ձեռք
տալ սննդամթերքներին: Անլվա (կեղ-
տու) ձեռներով շատ հեշտ է վարակել
այն մթերքները, որով սնվում է բնակ-
չությունը: Այդպիսի աշխատողների
ձեռները, լինեն նրանք քաղաքում հացի
դործարանում, խանութում, լինեն կոլ-
խողի կաթնատնտեսական ֆերմայում
կամ կոլխոզի պահեստում, մշտագետ
պետք է խիստ մաքուր լինեն, հաճախ

լիւացվեն, մանավանդ զուգարանից օդ-
տըլվելուց հետո, չուտ-չուտ և կարճ
կտրեն եղունդները և այլն։ Այս բոլորը
չափազանց կարելոր է։

4. Ամեն կերպ հայտաբերել լուծե-
րով ու փսխոցով հիվանդներին և ոչ մի-
այն ծանր հիվանդներին, այլ և այն բո-
լորին, որոնց մոտ հիվանդությունը շատ
թեթև է ընթանում։ Հիվանդներին հայ-
տաբերելուց հետո նրանց տեղափոխել
հիվանդանոց, որտեղ նրանք կստանան
անհրաժեշտ բուժումն ու խնամքը և այ-
լևո ուրիշներին վարակել չեն կարող։

5. Երբեմն անհրաժեշտ է լինում
անցկացնել պատվաստումներ խոլերայի
դեմ։ Եթե բժիշկն անհրաժեշտ կհամարի
պատվաստումներ անցկացնել բնակչու-
թյան մեջ, որպեսզի նա չվարակվի, ա-
պա հարկավոր է ամեն կերպ օդնել այդ
կարելոր միջոցառումին։

6. Բնակչությունից առանձնացնել
ոտնիտաբական ակտիվ, որն առողջապա-
հական օրդանների հետ ձեռք ձեռքի տը-

յած կկենսագործեն նախապահպահական,
միջոցները խոլերայի մուտքի դեմ, որը
կարող է տվյալ քաղաքը կամ գյուղը
ներթափանցել ուրիշ տեղերէց: Եսու չեծ
է սանիտարական ակտինի դերը, որի
աշխատանքը մշտապես ղեկավարում է
բժիշկը, միշտ սովորեցնում նրան: Բա-
վական է ասել, որ սանիտարական ակ-
տիվը, որը ենթադրենք, շրջում է բոլոր
տներն այնուղղ բնակվողների առողջու-
թյունն ստուգելու, որը սանիտարական
կարգ ու կանոն է հաստատում սննդի կե-
տերում, որը մշտապես հսկում է ջրա-
մատակարարման աղբյուրներին, մի
խոռոչով, իբրև հասարակական սանիտա-
րական աեսուչ օգնում է բժշկին սանի-
տարական միջոցառումներ կազմակեր-
պելու գործում, այդպիսի ակտիվն ա-
ռողջապահական օրդանների հետ միասին
թույլ չլ տա, որպեսզի խոլերան մուտք
դործի իր շրջանը կամ գյուղը, իսկ եթե
գեղքն արդեն գոյություն ունի, ապա
կօգնի բժշկին ամենակարճ ժամանակա-

ժիջոցում իսպառ վերացնելու և արմատ-
ախիլ անելու այդ վարակը:

Խոլերան, որը պատահում է ոչ հե-
ռու ՍՍՌՄ-ի սահմաններից, կարող է
մուտք գործել մեզ մոտ, մանավանդ պա-
տերազմական ժամանակի պայմաննե-
րում: Ահա թե ինչու անհրաժեշտ է, որ
մենք աչալուրջ լինենք և մշտապես հի-
շենք այդ վտանգի մասին, այդ վարակը
մեր երկրի սահմանները մտնելու հնարա-
գորության մասին: Խոլերան մեզ համար
սարսափելի չէ: Մեզ մոտ անցնելու դեպ-
քում, նու կոչնչացվի, որովհետեւ մեզ մոտ
կան բոլոր պայմանները նրան լիկվիդա-
ցիայի ենթարկելու համար: Սակայն
խոլերայի դեմ մղվող պայքարն ավելի
է ֆեկտավվոր կլինի, եթե մեր բնակչու-
թյունը լավ տեղյակ լինի այդ վարակիչ
հիվանդության մասին և ծանոթ լինելով
նրա հետ, առողջապահական օրգանների
հետ միասին ամենաակտիվ ու լայն մաս-
նակցությունն ունենա խոլերան կանխե-
լու և նրա դեմ մղվող պայքարի գործում:

ԲԱՎԱԿԱԿԱՆԻ ԱՐՏՈՒԹՅՈՒՆ

եջ

3

18

21

26

32

36

39

46

1. Խոլերայի պատմությունը	3
2. Խոլերայի միկրօբները	18
3. Խոլերան ինչպես է մանում և զարգանում մարդու օրգանիզմում	21
4. Հիվանդության հատկանիշները	26
5. Խոլերային նժանավող հիվանդություններ և լարարատոր հետազոտություններ	32
6. Խոլերայի տարածման տղբյուրներն ու ուղիները	36
7. Խոլերայի ինչպիսի հաղիքնմիաներին լինում	39
8. Խոլերայի կանխումը և պարփառը նրա դեմ	46



Պատ. խմբագիր՝ ԲԺ. Գ. Ա. Գալովյան

Վ Ֆ 4856 Պատվեր 759. Տիրաժ 3000,
Տպագրական 13/4 մամ. Մեկ մամուլում
26490 նշան: Հեղինակային 1,0 մամ.
Ստորագրված է տպագրության 15/XII 42 թ.
Հայովետնրատի տպարտն, Երևան, 1942 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0033916

ԳԻՆԸ 45 ԿՈՊ.